

## Հայաստանի զարգացման ռազմավարության նոր ուղի

Մեծարգո պարոն Գաբրիելյան,  
Նիստը վարող հարգարժան անձնակազմ,  
Թանկագին ներկաներ,

Ողջունում և գերագույն գնահատանքս եմ հայտնում ՀՀ սփյուռքի նախարարությանը 6-րդ Սփյուռք, Հայաստան և Արցախի խորհրդատուների կազմակերպման և իրականացման աշխատանքների կապակցությամբ:

Ամփոփ ներկայացնեմ «Հայաստան զարգացման ռազմավարության նոր ուղի» իմ առաջարկ-ելույթը:

Նախաբան՝

«Կայուն զարգացում» տերմինը բարդ հասկացություն է, քանի որ իր մեջ պարունակում է բազմակողմանի ուղիներ, սակայն կայունության հայեցակարգը զարգացման ոլորտում ընդգրկում է հետևյալ երեք հասկացությունները. «Տնտեսություն, էկոլոգիա, հասարակություն»: Այս երեք ուղիները լիակատար ներգրավված են միմյանց մեջ և կայունությունը զարգացման ընթացքում մեկնաբանում են ըստ հետևյալի՝

1. Կայուն զարգացումը պետք է ապահովի այն հասարակական աճը, որում բնակչության բոլոր խավերի կարիքները կիրականացվեն:
2. Շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանությունը և բնական ռեսուրսների մանրակրկիտ օգտագործումը:
3. Այս զարգացումը պետք է հանգեցնի կայուն տնտեսական աճի և տնտեսական բարգավաճմանը և ահա թե ինչպես պետք է իրականացվի կայունության նպատակները. պետք է հստակ մշակված և պետականորեն փոխանցած ռազմավարությունը պատկան ոլորտում հիմք ծառայի այդ նպատակներ իրականացման ուղղությանը և հաջորդ քայլում ռազմավարության ենթակա մշակած նպատակները իրականացվում են գործադիր ծրագրով և ժամանակացույցով ձեռք բերված արդյունքների գնահատումով՝ ներկա իրավիճակից ապագայում ցանկալի իրավիճակի հասնելու համար:

Հարկ է նշել, որ ցանկացած ոլորտում յուրաքանչյուր ռազմավարություն իր կազմման, իրագործման և գնահատման գործում ուղղակիորեն կախված է ներքին և արտաքին միջավայրի ճիշտ գնահատումից և այն ցանկալի իրավիճակին հասնելու ճիշտ ընտրությունից նախատեսված ժամանակահատվածում,:

Առաջարկ. «ՓՄՁ Ներդրումային նոր ուղիներ» հիմք ընդունելով «Համագործակցային ներդրումային ռազմավարություն» վերլուծելով Հայաստան և

Միյուրք հարաբերությունների առկայությունը և փոխադարձ կառույցային կապերը տարբեր բնագավառներում: Հնարավոր է այս դրական փոխկապակցությունը նաև զարկ տա «Անհատական ներդրումային համագործակցության ուղղությունով» որում յուրաքանչյուր հայ Միյուրքում համակարգած, տեղեկանալով Հայաստանի ՓՄՁ-ի ներդրումային կարիքներին ըստ ցանկության ոլորտում որևէ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի բիզնես գաղափարը իրականացնելու կամ զարգացնելու գործին ուղղակի համագործակցության ներդրում կատարի, որտեղ վերլուծած կլինի բիզնեսի հետ կապված խնդիրները և ներդրումի չափի ու ձևի ինչպիսիությունը, թափանցիկ և օբյեկտիվ հարթակի վրա և անմիջականորեն երկրի որևէ մարզում, քաղաքում կամ գյուղում՝ իր մեջ պարունակելով բազմակողմանի դրական արդյունքներ:

Այսպիսով՝ ներդրումային գաղափարը պետական և կառավարական մակրոբիզնեսի կողքին պետական հսկողությամբ կգործի միկրոբիզնեսը սփյուռքի առավել ներկայությամբ և համահայկական ներդրումային առավել տեմպերով:

Հարկ է նշել, որ ամփոփ առաջարկած գաղափարի համար նախատեսված է գործնական մեխանիզմ և ծրագիր:

Իրանի Իսլամական Հանրապետությունը, որպես տարածաշրջանի խոշոր տնտեսություն և առաջատար երկիր, անցյալ 10 տարիների ընթացքում, կարևորելով ՓՄՁ-ի կարևորությունը երկրի զարգացման գործում որպես տնտեսության զգալի և ազդեցիկ բնագավառ, զբաղվածության ցուցանշի ամենակարևոր գործոն, իր պետական հոանավորությանն է ծրագրել այս ոլորտի զարգացման գործում, ըստ հետևյալի.

- Ենթակառույցների տրամադրման հովանավորություն
- Ուսուցողական և տեխնիկական աջակցություն
- Նյութական և կրեդիտ հովանավորություն
- Խորհրդատվական և խթանման հովանավորություն
- Մարքեթինգի և շուկայի ուսումնասիրությունների հովանավորության և յուրաքանչյուր աջակցության համար նաև ճշտում է ցուցանիշ, որով մեկնաբանվում է աջակցության և հովանավորության ձևն ու չափը
- ՓՄՁ համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների զարգացման ուղին:

Չարգացման գործընթացում կարևորագույն դեր ունի մարդկային ռեսուրսների գործոնը, քանի որ յուրաքանչյուր ազգի ապագան է ձևավորում իր որակով և քանակով:

Միջազգային փորձը և ուսումնասիրությունների արդյունքը վկայում են, թե կայուն զարգացման և բազմակողմանի բարգավաճումը անցնում է մարդկային ռեսուրսներով ստեղծված հիմքերի վրայից և որևէ հաջողության և զարգացման ընթացք ցանկացած ուղղության մեջ, անհրաժեշտ է առաջինը ներդրում կատարել ոլորտի մարդուժի պատրաստման գործում: Գործող որևէ համալսարան կամ որևէ բարձրագույն կրթական

հիմնարկ մարդուժի պատրաստման գործում առաջատար կառույց է համարվում, որը առաջինը ծառայում է պետական երկարամյա ռազմավարություն իրագործելու անհրաժեշտ մասնագետ կադրեր պատրաստելու գործում, որոնցով պետական ծրագրերը իրականացվում են նախատեսված մարդկայի ռեսուրսների միջոցով:

Այսպիսով՝ հեռանկարային նկատառումներով անհրաժեշտ է համարվում մարդուժի պահանջը ըստ ոլորտի, քանակի և որակային իմաստով ծառայել երկարամյա կայուն զարգացման ռազմավարության գործում, որտեղ նպատակները ավելի արդյունավետ են լինելու, քան պայմանները:

Վերջում նաև պատրաստակամություն եմ հայտնում ավելի նեղ մասնագիտական շրջանում բացատրել և խորանալ առնչվող հարցերին:

Շնորհակալություն Ձեզ համբերության համար:

**Ջոնսոն Ադաբաբյան**

D.BA – Իրան

խորհրդատու